

Մ Ա Ս Ի Ս

Հ Ա Ն Դ Ե Ս

Ազգային, Գրական և Քաղաքական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎ ՇԱՐԱԹՆ ԱՆԳԱՄ ՄԸ

ՏՆՕՐԷՆ ՀՐԱՆՑ ԱՍՏՆՈՒՐ	ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ
ՏԱՐԵՄԱՆ ԲԱԶԱՆՈՐԻԱԳԻՆ Պոլիս Գալառներ Օսար երկիրներ	ԳՐԱՍԵՆԵԱԿ Ղալաթիա, Տէմիր Խան, Թիւ 24

ՄԵՐ

ՎԱՆՔԵՐԸ

Ա.

Հայոց եկեղեցւոյ եւ հայ մատենագրութեան պատմութեան մէջ աներկբայ մեծ դեր ունեցած են այն մենաստաններն որոնք, հայաբնակ վայրերու ամէն կողմերը սփռուած, կենդանի պահած են Դ. Դարէն ի վեր Աւետարանի հաւատքը մեր ժողովրդեան սրտին մէջ եւ գլխաւոր կեդրոններն եղած են հայ դպրութեանց:

Մեր վանքերու անցեալը եւ ներկան բաղդատելով, կարելի չէ արտի խորին մտւածով չը հաստատել այն յետաւնաց ու ողբալի վիճակն, ուր այսօր կը գտնուին անոնք: Այն սրբավայրերն որոնք երբեմն մեր մէջ մշտավառ կը պահէին Քրիստոնէութեան ուսումը եւ կը մշակէին եկեղեցական մատենագրութիւնն ու երաժշտութիւնը, որոնք հայ ժողովրդեան կրօնական կեանքին արթուն պահապանները կը-

լային, այդ սրբավայրերն այսօր մեծ մասամբ աւերակ դարձած, մասամբ ամայի, մասամբ միաբանութենէ զուրկ կը մնան եւ այն սակաւաթիւ վանքերն ալ, որք ունին միաբանութիւններ, հայ մտաւոր զարգացման համար գրէթէ ոչինչ կ'ընեն:

Ուսումնասիրելով մեր վանքերու անցեալը, կը տեսնենք թէ, ըստ աւանդութեան, Ա. Դարուն հիմնուած են առաջին հայ վանքերը: Սակայն միաբանական անդրանիկ ուխտն հաստատած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ, հիմնելով Խնաչեան վանքն, այժմ Գլխայ Ս. Կարապետ: Լուսաւորիչ միաբանութեանց կանոն մը սահմանած է իր Յաճախապատումին մէջ, ուր վանքը կը նկատէ « եղբայրութիւն » մը: Լուսաւորիչի ժամանակ եւ անկից ետքն ալ հայ կրօնաւորք կը վարէին անձնուրաց կեանք եւ կամովին կը տանջէին իրենց մարմինը, այդ մարմնական տառապանքին մէջ որոնելով հոգւոյն գերազոյն մխիթարութիւնը: Խորհրդայ վանքի միաբաններու անունը վայրի բանջարն էր, Մահնոյ կրօնաւորները ոչխարի մորթ կը հագնէին եւ Թանահաթի կրօնաւորները հացով և ջրով միայն կ'ապրէին, նոյն խակ Թանէ զրկուելով: Վանքերն, այդ առաջին շրջանին մէջ, խստակրօնութեան եւ մշտապաշտօն աղօթից

հանդիսավայր ըլլալով մանաւանդ , ժողովրդեան ներշնչեցին կրօնքի սէրն ու կրօնաւորին պատկառանքը :

Ե. Դարէն սկսեալ կը յիշուին նաեւ վանքեր ուր հիմնուեցան որբանոցներ , հիւանդանոցներ , հիւրանոցներ : Գեառնայ վանքը , Զ. դարուն , որբանոց մ'ունէր , ինչպէս նաեւ Նորաշէնք , Ժ. Դարուն . Հոռոմոսի վանքը ասպնջականոց էր Ժ. Դարուն . Սաւառի վանքին մէջ ընդարձակ հիւրանոց մը կար ԺԲ. Դարուն . նոյնպէս կարօտեալներու ապաստան եղած են Նորեկայ , Խլաձորի եւ Հոգեայ վանքերը : Աղքատներուն եւ կարօտեալներուն համար վանականաց այս հոգածութիւնը օժանդակած է սերտ կապ մը հաստատելու վանքերու եւ ժողովրդեան միջեւ :

Բայց ինչ որ գլխաւոր կոչումն եղաւ վանքերուն , « ապաստանորել էր ժողովրդական կրթութեանը » , կը գրէ Կոստանեանց իր Հայոց վանքերուն մէջ : Ս. Մեսրոպ հայ գրերու գիւտն ընելէ ետքը , վանքերը կրթական կեդրոններ դարձան , ուր մեր վարդապետք զարգացողին հայ դպրութիւնները , եկեղեցական եւ հնախօսական ուսումնասիրութիւններ ընելով : Այդ վանքերու մէջ նշանաւոր եղան Էջմիածին , որուն վերատեսուէն էր Ե. Դարուն Ղազար Փարպեցի եւ որ ԺԵ. դարուն վերստացաւ իր նախկին պայծառութիւնը . Շեքեայ Դոյրեվանք , որուն առաջնորդ էր Է. Դարուն Բարսեղ շոն . Սեւեայ Վարդապետ (Տաթեւի վանք) , որուն Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ արտօնութիւն տուած էին Ս. Գիրքը թարգմանել եւ մեկնել եւ որուն ղեկավար կամ միաբան եղած են Զ. Դարէն սկսեալ Սիւնեաց Պետրոս եւ Մաթուսաղա իմաստասէր եպիսկոպոսները , Ստեփաննոս նշանաւոր եպիսկոպոսն որ ճամբորդած է Աթէնք եւ Հռոմ , ճառեր եւ շարականներ գրած , եկեղեցական երաժշտութիւնը մշակած , եւ սպաննուած է խառնակեաց հայ կնոջմէ մը զոր յանդիմանած եւ արտաքսած էր Եկեղեցիէն , Ստեփաննոս եպիսկոպոս Օրպէլեան որ իր Սեւեայ Յիշատակաւորը գրելու ժամանակ մեծապէս օգտեցաւ Վարդապետարանին մատենաներէն , եւ ԺԵ. Դարուն Յովնան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի , Ունիթոռաց ճար-

տար ախոյեանները . Նորեկայ վանքը , ուր վանահայր էր Ժ. Դարուն Անանիա Նարեկացին , որ մաքառեցաւ Թոնդրակեցիներուն դէմ եւ որուն Գէր Խաչատուրեանը վերջերս հրատարակեց Աբարաթի « Միաբան »-ը , Պ. Գալուստ Տէր Մկրտչեան , նախկին ուսանող Բարիգի եւ Գերմանիոյ մէջ . Հոգեայ վանքը , ուր Ժ. Դարուն հինգ հարիւր կրօնաւորներ կային եւ ուր ԺԱ. Դարուն վերջերը Յովհաննէս Սարկաւազ գրեց իր Սարկաւազադիր Տօմարը . Կիլիկիոյ Սեւեան առաջադէպը , ուր ուսում առաւ Մըխրթար Գօշ եւ ուր բնակեցաւ Գրիգոր Մեծն Վկայասէր եւ Կարճի վանքը , ուր աշակերտեցան Գրիգոր Պահլաւունի , Ներսէս Շնորհալի եւ Ներսէս Լամբրոնացի . Հառայ Թառայ վանքը , ուր Եղիա երաժիշտը կարգադրած էր՝ երաժշտութեան ժամանակ՝ « ամենեցուն ընդ մի բերան հնչել եթէ ցած եւ եթէ բարձր » . Գեառնայ վանքը եւ Նոր Գեառնայ վանքը , ուր ապրեցաւ Միխրթար Գօշ , եւ ուր աշակերտեցաւ ԺԳ. Դարուն Վանական վարդապետը . Հոգեմէն , զոր բարեկարգեց Տարօնեցի Խաչատուր վարդապետը , հեղինակ « Խորհուրդ Խորին » ի (1) :

Հայր Խնձիճեան , իր Հնախօսութեանց մէջ , կը խօսի նաեւ հայ կուսաստաններու վրայ : Բարթողիմէոս հիմնած է առաջին կուսաստանը , Հոգեայ վանք . Ստեփաննոս , ոտանաւորով պատմելով այդ հիմնարկութիւնը , կ'ըսէ Բարթողիմէոսի համար .

Ձեռնիկն Հոգոց վսեմ անուանէ ,
Եւ ի լուստ կանայս յանձնէ ,
Խրճիթ փոքրիկ ևոցա շինէ ,
Եւ ի դերձուկն բաժանէ :
Կացուցանէ գոյր Յուսիսայ
Մայրպէս կրօնից գըղուխ ևոցա ,
Ձիւրն Ուղղայ եւ Մաքսիւթայ ,
Եւ զայլ կանայսն յեւ ևոցա :

Կրօնաւորեալ կանանց մէջ նշանաւոր եղած են Շուշան , եւ Մարիամ որ Թ. Դարուն նորոգած է Սեւեայ վանքն , ուր առանձնացաւ փոքրիկ խուցի մը մէջ , թէեւ արգիլեալ էր հոն կանանց ոտք կոխել :

(1) Իբր կրթական երգեր նշանաւոր եղած են նաեւ Սաւառի , Սեւեան , Հոռոմոս , Կարճի , Գայթեմ , Ս. Ամբր , Գառնայ եւ Խնձիճեան վանքերը :

Պէտք է յիշել նաեւ Շահանդուխտ գեղանի Հայունհին, որ հիմնեց կուսաստան մը եւ երեսուն տարի ճգնեց եւ որուն վրայ երկարօրէն կը խօսի Ստեփաննոս եպիսկոպոս Օրպէլեան, քաղելով անոր պատմութիւնն հին նամակէ մը, զոր ինքը Շահանդուխտ գրած էր:

Ժ.Բ. Դարուն, Մխիթար Գօշ վանական կեանքի եւ վարդապետներու համար սահմանեց խիստ օրէնքներ, որոնց շնորհիւ վանքերուն մէջ հաստատուեցաւ յարատեւ ու անփոփոխ կարգապահութիւն: Վարդապետները վանքերու մէջ միայն չէին սահմանափակած իրենց գործունէութիւնը, կ'ըսէ Կոստանեանց: Կը մասնակցէին եկեղեցւոյ կառավարութեան, հսկելով եկեղեցական կանոններու պահպանութեան: Ուսուցչութիւն կ'ընէին ոչ միայն կրօնաւորներու այլ եւ աշխարհականներու: Կը քարոզէին եկեղեցիներու մէջ: Կը մշակէին հնախօսութիւնը եւ եկեղեցական բանահիւսութիւնը: Կը գրէին մեկնութիւններ, խորատներ, ճառեր, շարականներ, տաղեր: Կ'ուսուցնասիրէին ոչ միայն կրօնը, այլ եւ Որբացւոց, Բիւզանդացւոց, Լատինաց գրականութիւնն ու գիտութիւնները: Կը մշակէին գեղագրութիւնը եւ եկեղեցական երաժշտութիւնը:

Ահա մեր վանքերուն անցեալը եւ այն մեծ դերը, զոր մեր վանականք ունեցած են մեր եկեղեցւոյ պահպանութեան եւ մեր մատենագրութեան մշակման մէջ:

Իսկ այսօր ի՞նչ վիճակի մէջ են այդ վանքերը:

Անոնցմէ ոմանց տեղն իսկ որոշապէս ծանօթ չէ այսօր, եւ ոմանք աւերակ դարձած, մեզ կը թողուն սրբատաշ քարերու բեկորներ, կիսափուլ մամապատ որմեր, խաչեր, արձանագրութիւններ, զորս հետզհետէ կ'ոչնչացնէ կ'անհետացնէ ժամանակին յամր ու խուլ քանդումը, որոնք յաճախ ուխտատեղիներ դարձած են ուր ժողովուրդը չի թալ հին սրբավայրին յարգանքը պահելով իր երախտագէտ սրտին մէջ, եւ որոնցմէ քիչ ատենէն տարտամ ու տխուր յիշատակներ միայն պիտի մնան: Շատ մը վանքերէ այժմ մերկ տաճարներ միայն կանգուն կը մնան դեռ, որոնց մէջ քիչ անգամ կը լսուին հաւատացելոց ա-

ղօթքին հծծիւնները եւ ուր սակայն խորհե-րու մէջ, քարերու տակ անցեալին կրօնա-կան աւանդութիւնները կը պահուին երկիւղածօրէն: Եւ ուրիշ վանքեր ալ, որք դեռ կանգուն են, յաճախ խարխուլ, կրելով իրենց վրայ ալեւոյթին բոլոր քայքայումները: Լքեալ, ամայի, իրենց տաճարներուն անդորրութեանը մէջ անէացնելով դարեւոր աղօթքներու արձագանգը եւ իրենց սեւցած պատերուն վրայ հետքերը միայն պահելով հոն վառուած խոնկերուն ծուխին: Ուրիշ վանքեր ալ, որոնք ունին դեռ իրենց կալուածները, ոչխարները, դարպասի ու պտղիի հասոյթները, այլ բնակարան դարձած են շահադէտ աշխարհականներու կամ քահանայներու որոնք հոս իրենց ստացուածքը կը նկատեն վանքն ուր կ'ապրին, հոն իրենց ազգականաց վըրայ Խաչո- կ'ընեն վանքին հողերը, ուրիշ տեղ մը ինքնագլուխ կիշխեն վանքին՝ առանց համար տալու ոչ վիճակի առաջնորդին եւ ոչ Կաթողիկոսին կամ Պատրիարքին: Իսկ կանոնաւոր միաբանութեամբ սակաւաթիւ վանքեր միայն կան, յաճախ այնպիսի կրօնաւորներով որոնք տգիտութեան մէջ կը տապալկին եւ իրենց ստամոքսին կուտան այն անուշոր զոր իրենց նախորդներն ուղեղին կուտային, վանքեր որոնք մեր բարոյական կեանքին համար կորուսած են այլ եւս իրենց նշանակութիւնը:

Մեր վանքերու վրայ ուսուցնասիրութեան մը ձեռնարկելով, հետաքրքիր եղանք նախ գիտնալ թէ որչափ վանքեր ունեցած ենք ց'արդ եւ անոնցմէ որչափն աւերակ վիճակի մէջ է այսօր, որչափը կանգուն եւ ամայի, որչափը չէն: Պատմութիւնը կ'արձանագրէ թէ Մեծն Ներսէսի ժամանակ 2000 է աւելի հայ մենաստաններ եւ եպիսկոպոսարաններ կառուցուած են, եւ թէ ԺԱ. Դարուն, միայն Վասպուրականի մէջ, կային 900 մենաստաններ որոնցմէ 115ը, «մենաստանք մեծամեծք»: Հաւանական է որ այս թիւերը չափազանցուած ըլլան, ինչպէս վաղեմի քաղքի մը հազար եւ մէկ եկեղեցիներու թիւը: Սակայն աներկբայ 500է աւելի վանքեր ունեցած ենք աշխարհի ամէն կողմը, որոնց անուններն ու անցեալը ծանօթ են, որոնց ամենաստուար մասին տեղն ու դիրքը որոշ են, մեծ մասին

չէնքերը կամ տաճարները կանգուն են դեռ, թէեւ փոքրագոյն մասը միայն բնակիւալ ու չէն է այսօր:

Կ'ուզենք ամփոփ դադափար մը տալ բոլոր ծանօթ հայ վանքերուն վրայ, անոնց տեղն ու կացութիւնը ճշգրիտ, որքան կարելի է: Մեր այս աշխատութեան մէջ մեծապէս օգտակար եղան մեզ Ալիշանի երկերը, Հ. Գաբեգին Զարպանէլեանի Նոր հայ Դպրոցի պատմութիւնը, Վանօրէից Խորհրդոյ 1872ի տեղեկագիրը, պարբերական թերթերու մէջ հրատարակուած յօդուածներ եւ ուրիշ ձեռագիր աշխատութիւն մը, զոր սկսած է պատրաստել մեր բարեկամներէ մին հայ վանքերու տեղագրութեան վրայ եւ զոր կը փափագէինք ամբողջացած ու հրատարակուած տեսնել:

Մեր ընթերցողներէն շատերուն համար անակնկալ մը պիտի ըլլայ լսել թէ եւրոպայի, Ափրիկէի, Միջերկրական ծովի կղզիներու մէջ ալ ունեցած ենք տասնէ աւելի հայ վանքեր եւ կուսաստաններ Մօսկայի, Վենետիկի եւ Վիէնայի վանքերէն զատ. եգիպտոսի մէջ Զահէրէ կամ Զահէրաթ վանքը զոր հիմնեց Գրիգոր Կաթողիկոս Վկայասէր. Կրէտէի Ս. Կարապէտ վանքը ուր կ'աքորուէին յանցաւոր եկեղեցականները. Կիպրոսի մէջ հայ ճգնաւորաց Սուրբ Եփեմ մենաստանը եւ Ս. Մակարայ վանքը որ 250 ոսկի եկամուտ ունի եւ ուր կան դեռ գրքեր եւ ձեռագրեր. Զենուվայի Ս. Բարեպետ վանքը զոր երկու հայ կրօնաւորք հաստատեցին 1307 ին, որոնց՝ Քրիստոսի դաստառակը նուիրեց Զենուվայի դուքսը 1384ին. Հոմի Ս. Անտոնի մենաստանը; որ կերեւայ թէ երբեմն Հայոց վանք էր եւ ուր 1861ին գրուեցաւ դեղեցիկ խաչվէմ մը հայերէն արձանագրութեամբ. Նախօրի մէջ կուսաստան մը. Սուչովայի Հաճոյակապար վանքը, ուր Նիկոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մելքիսեդ Կաթողիկոսէն. Ռումանիոյ մէջ, Արճէշի վանքը որուն վրայ վերջերս շահեկան յօդուած մը հրատարակուեցաւ Արեւելի մէջ. Դրիմի մէջ Լուսաւորէ անապոյր. Նոր Նախիջևանի մօտ Ս. Խաչի վանքը ուր անցեալ դարու վերջերս Յովսէփ Արղուծեան հիմնեց վարժարան ու սպարան եւ ուր 1866ին դեռ վարժարան մը կար

Նոր Նախիջևանի Մարդասիրական ընկերութեան խնամքին տակ:

Ռուսահայ նահանգներուն մէջ ունեցած ենք 150 ի չափ մենաստաններ:

Սոմխէթ նահանգին մէջ նշանաւոր են Սանահին եւ Հաղբաթ, զորս հայ Տիկին մը շինեց 977 ին եւ 1068 ին, Հոմաթի Ս. Նշան, Մարթաշէն, Հաճոյ Ուրդը զոր 1201ին կառուցած է Զաքարիա՝ հիանալի ճարտարապետութեամբ, եւ ուր 1878 ին կանգնուեցաւ «մի հաստահինն շինուածք Ժառանգաւորաց դպրոցի համար»:

Երեւանու նահանգին մէջ կը յիշատակուին սակաւաթիւ չէն վանքեր միայն. Էջմէշէն, որ իր մէջ կեդրոնացուցած, ամփոփած է կարծես բոլոր Ռուսահայ վանքերուն կեանքն ու գործունէութիւնը, որ Դ. Դարու սկիզբներն հիմնուած Գրիգոր Լուսաւորչէն եւ 1441 է ի վերնորէն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան աթոռ դարձած, ունի այսօր իր ձեմարանը, իր սպարանը, իր միաբանութիւնը, եւ ուր կը պահուին «Գեղարդ» աստուածամուկ, փայտեայ պատկեր ձեռագործ Յովհաննու Աւետարանչի, թգաչափ մասն Նոյեան տապանին, Աջ Սրբոյն Լուսաւորչի, Աջ Սրբոյն Յակոբայ Մծբնեցւոյ, գազաթի Սրբոյն Հովսէփմեայ, եւն», կը գրէ Ալիշան. Սեւանայ Ս. Աստուածածին մենաստանը «ուր կը պահուի դեռ երկաթեայ խաչ մը զոր ըստ աւանդութեան Թադէոս առաքեալ շինած է առանց հրոյ եւ լոկ ձեռքով այն կոնքէն յորում Ս. Կոյսը կը լուար Աստուածորդին» (1). Որդոնապարէ Ս. Թովմայի մենաստանը եւ հին Նախիջևանի մօտ Ս. Սարգիստի Կարճի վանքը, ուր քանի մը «Չերմեռանդ կրօնաւորներ նոր բնակութիւն են հաստատել դպրոց բանալու նպատակաւ». Նախիջէնի վանքը, զոր կառուցած են, ըստ աւանդութեան, Բարթողիմէոս եւ Թադէոս առաքեալները, ուր պահուած է Խաչիկ Կաթողիկոսի 976 թուին գրած մէկ կոնդակն, ըստ Ալիշանի, եւ ուրիշ Ներսէս Ե. բերել տուած է յէջմիածին, 1848 ին, երկաթադիր աւետարան մը, քանդակեալ փղոսկրեայ կողերով, 1000 տարուան հնութիւն:

Եւ ասոնց քով, դեռ որչափ վանքեր, Երեւանի նահանգին մէջ, առանց կանոնա-

(1) Բազմալէզ, 1890, Յունիս:

ւոր միաբանութեան. Ս. Գայեանէ, ուր համանուն կոյսը կը հանգչի, որու հիմնարկութեան ատեն, Դ. դարուն, նշանաւոր հայ Տիկին մը եւ Օրիորդ մը՝ իրենց հանդերձներով՝ բրած հողը կը կրէին եւ գուրս կը թափէին, եւ որուն մէջ հոգեւոյս Բաստամեանց վարդապետ ի դուր աշխատեցաւ, 1812 ին, հիմնել միաբանութիւն մը. Ս. Հրէմիէ, ուր կը պահուին Հոփիսմէի ձկնթիւն ու Սթանագինէ հայրապետին աջը, եւ որուն մէջ ստորերկեայ դամբան մը կ'ամփոփէ հոմայեցի հրաշագեղ նահատակուհիին ոսկորները. Խորվեալ Ս. Գրիգոր, որուն մօտ 12 տարի ճգնեց մեր անդրանիկ կաթողիկոսը. Այրեւանէ կամ Գեղարքայ նշանաւոր մենաստանը, Գեղամայ լեռներուն մէջ, ուր կը պահուէր երբեմն Քրիստոսի Դեղարդն եւ ուր կը գտնուէին եօթը « զարմանալէն » եկեղեցիներ, որոնցմէ ոմանք ժայռերու մէջ փորուած. Մանի Գեղի Ս. Գեղարքայ վանքը, ուր են Ս. Գեղորգայ նշխարը. Մատենաց մեծահռչակ մենաստանը, ուր Սողոմոն վարդապետ Բ. Դարուն գրեց իր Տնայանք Ուրիշ վանքեր ալ որոց տաճարները միայն կը մնան կանգուն. Հանափանտ, որոյ եկեղեցւոյն դրան վերայ Լուսաւորիշ կանգնած է խաչ մը իր հասակով եւ ուր կը պահուէին Քրիստոսի բեւեռներն ու վարչամակն, ըստ աւանդութեան. Երեւանի Բանափանտ զոր հիմնեց Թարթողիմէոս Բոնոնիացի լատին եկեղեցականը ԺԴ. Դարուն եւ ուր Ունիթոսը ծաղկեցան իրենց գլուխն ունենալով Բոնեցի Յովնան վարդապետը. Փարպէ մենաստանը, ուր կը հանգչի Ղազար Փարպեցի. Օջախ, որուն տաճարը նորոգեց Գեղորգ Դ. կաթողիկոս եւ ուր է Ս. Մեսրոպի գերեզմանը. Արաբաձորի Ս. Աստուածաձին, որուն եկեղեցին հիմնած է Մամա խաթուն, 1231 ին. Դարափանտ, Բջիէ եւ Վանափանտ վանքերը, եւայլն: — Եւ աւերակ վանքեր ալ, Եղեւթաբէ անուանի մենաստանը, ուր Մովսէս Բ. կաթողիկոսն հաստատեց, 551 ին, Հայոց Տումարն ու թուականը. Ս. Յովնայ վանքը, (Մասիս լեռն մօտ, այն տեղ ուր կանգ առաւ Մծբնայ Հայրապետը « Եւ լանել իւրում ի խնդիր փայտից տապանին »), որ 1440 ի Յունիս 20 ի երկրաշարժին Մասիսի կողերէն վիժած « բլրահարակ կարմրադոյն վէմի » մը գահավիժուովը կը կորուզուէր, կը բաժնուէր իր հիմունքէն եւ կը

թաւալէր Ակոռիի գիւղին վրայ, զոր հիմնադրատակ կը կործանէր. Ուշի Ս. Սարգիս վանքը, որուն առաջնորդն էր ԺԷ. Դարուն Ոսկան մեծանուն տապաքրիչը. Դաւթայ վանքը, որ Կուսաստան էր. Նորափանտ, ուր է Ստեփաննոս Օրպելեանի գերեզմանը (1): — Եւ աւերակաց հետքերն ի սպառ ջնջուած, տեղերն իսկ գրեթէ անծանօթ ուրիշ սրբավայրեր ալ որոնց կրօնական յիշատակները կը կտակէ մեզ անցեալը. Գեղարքայ վանք (որ 2. Դարուն ունէր 1000 արջառ, 12000 ոչխար, 700 ուղտ, 600 ձի, 400 էշ, 170 մըշակ, ըստ Օրպելեանի), Խորափետ, Հերմանափանտ, Կաթնջար, Գայեյոր, Երեւան փանտ եւ ուրիշներ:

Գանձակի նահանգին մէջ նշանաւոր են Հաղարծնի եւ Զարեհի վանքերը, որոնց մէջ վերջերս միաբաններ հաստատուեցան զպրոց հիմնելու նպատակով. միւսները գրեթէ ամայի են, կամ աւերակ, կամ անյայտ. Նոր Գեղի վանքը, ուր կը հանգչի Մխիթար Գօշ. Մարգարէ վանքը, հրաշակերտ մենաստան. Խորանալար, զոր հիմնեց Տաւուշեցի Վանական վարդապետը. Խաղափանտ մենաստան, ուր Ս. Մեսրոպ քարոզեց. Դաւթայ անապատ, ուր Մխիթար Գօշ գրեց իր Դաւթաբանագիրքը (2):

Դարապաղի նահանգին մէջ պետք է յիշատակել, կրթական տեսակէտով նշանաւորագոյն հայ վանքը, Տաթեւ, Սիւնեաց վարդապետարանը, այս վանքն, ուր կը գտնուի Գրիգոր Տաթեւացիի գերեզմանը, հիմնուած է, ըստ աւանդութեան, Առաքելոց ժամանակ եւ հիմնադրեց նորոգուած է 995 ին Սիւնեաց Յովնանէս եպիսկոպոսէն. մինչեւ այսօր այդ վանքը կանգուն է դեռ եւ բնակեալ, ահեղի ձորերու վրայ բարձրացած, Որոտնայ գետին փրփուրներուն մօտ, հին նուիրական յիշատակներով եւ գերեզմաններով լեցուն, իր 997 տարիներու վեհափառութեանը մէջ. հոն դեռ անցեալ տարի այցի գնացեր էր Լէօ, Ռուսահայոց ծանօթ վիպասանը եւ այդ սրբավայրին իրեն ներ-

(1) Եւ ուրիշ վանքեր ալ, մեծ մասն աւերակ, վարդապետ Ս. Նշան, Կիւրեան փանտ, Եւրափանտ մենաստան, Միւսայ ուխտ, Եւրպայ վանք, Կաթնփանտ, Փրեւեւանք, եւայլն:

(2) Յիշատակուելու արժանի են նաեւ Սաղմոսափանտ, Նորափանտ, Հայոց Բար, Կեղարքայ, Մարափանտ, Երեւան փանտ Ս. Կարապետ, Մարգարէ, Գօշայ վանքերը:

ընչա՞ծ զգայութիւններն ի գիր առեր եւ հրատարակեր էր Տարալէ մէջ, վանքին պատկերովը. այդ յօդուածը, որ Պոլսոյ մէջ ալ արտատպուեցաւ, կը նկարագրէ Տաթեւի տեղն ու դիրքը, տաճարը, հրաշալի քարէ սիւնը որուն կատարն երբ շարժէ մարդ «ամբողջ սիւնը թխկթխկալով հանդարտ օրօրում է եւ շուտով էլի անշարժանում»։ Վանքին հնութեանց վրայ խօսելով Լէօ կ'ըսէ. «Տաթեւում մինչեւ այսօր մնացել են մի քանի նշանաւոր հնութիւններ, Ս. Գրիգոր Տաթեւացու եպիսկոպոսական թաղը, գրքեր, որոնց մէջ յայտնի է Տաթեւացու ձեռքով գրած փոքրիկ Աւետարանը եւ մի հաստափոր գիրք, որ Գէօթիւկ է կոչւում. այդ գրքի մէջ գրուած է Սիւնեաց աշխարհի պատմութիւնը, որը դեռ չեն ուսումնասիրել»։ Տաթեւէ ետքը Գարապաղի վանքերուն մէջ նշանաւոր են Գառնաթիւն անուանի վանքը, ուր բերուած է Ս. Կարապետի գլուխը եւ ուր նստեցան Աղուանից բոլոր Կաթողիկոսք, մինչեւ որ այդ Կաթողիկոսութիւնը միացաւ Էջմիածնի, 1815 ին. Ամբաստան վանքը, զոր հիմնեց Լուսաւորիչ եւ մեծաշէն կանգնեց Գրիգորիս, Լուսաւորից թողը որուն Գաւազանը ԺԳ. Դարուն այս վանքէն ղրկուեցաւ Կոստանդնուպոլիս. Ջրվաթիւն մենաստանն, ուր կը գտնուի Ս. Եղիշէի գլուխը (1)։

Պարսի նահանգին մէջ, անուանի են Հաւաս, 935 ին հիմնուած եւ վերջին անգամ 1852 ին նորոգուած, նշանաւոր իր հոյակապ շէնքերով եւ կարմիր քարէ օրօրոցի ձեւ ունեցող գերեզմաններով, առանց միաբանի, գրեթէ լքեալ. Վարդէի Հայր, զոր Մաթուսաղա հիմնեց է. Դարուն, այժմ ուխտատեղի. Խնձկնից վանք, զոր 1877 ին Լազարեան յանձնեց Ալեքսանդրապոլցի Մանուկեան Տ. Յարութիւն վարդապետին եւ որ այժմ ծաղկած է. Ս. Երբարդուհան, Ս. Լուսաւորիչ, Ագրիւն Ս. Ստեփաննայի վանքերը։

Իսկ Պարսկաստանի մէջ ունինք երեք վանքեր. Արարչու Ս. Թադեոսի վանքը, ու

րուն մատուռներէն միոյն մէջ Ս. Սանդուխտի մարմինն ամփոփուած է, ըստ աւանդութեան, եւ ուր աւարտեց Յովհաննէս Նորդիկացին Մատթէոս Աւետարանի մեկնութիւնը, զոր սկսած էր Ներսէս Շնորհալի. Նոր Զաւայի Ամենափրկի վանքը, 1656 ին հիմնեալ, եւ Ս. Կարապէտի Կուսանաց վանքը, 1623 ին հիմնեալ, ուր դեռ մօտ ժամանակներս 10 ի չափ միանձնուհիներ կային, որոնց արգիլեալ էր գիր գրել, թէեւ կարգալու արտօնութիւն ունէին, եւ որոնք եկեղեցիին մէջ կը կրէին յատուկ համազգեստ մը, անկրնգուղ վեղար եւ սեւ ցիպիէ փիլոն։

Գրեթէ բոլոր այս վանքերը, որոնք էջմիածնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան անմիջական իրաւասութեան տակ են, նախանձելի վիճակ մը չունին բնաւ. էջմիածնայ վանքը եւ ուրիշ քանի մը վանքեր միայն ունին իրենց եկամուտները. միւսները, գրեթէ առանց միաբանի, առանց հասոյթի, իրենց բաղդին ձգուած, հաւանօրէն քիչ ատենէն ամենքն ալ աւերակաց վերածուին Ըղձալի է որ Մայիս 4 ին էջմիածնի Կաթողիկէին մէջ ընտրուելիք մեր նոր Հայրապետը միջոցներ ձեռք առնու ծաղկեցընելու համար այդ վանքերու գէթ գլխաւորները, զանոնք մանաւանդ որոնք իրենց պատկառելի անցեալով իրաւունք ունին մեր խանդավառութիւն եւ մեր երախտագիտութեան։

Երկրորդ յօդուածի մը մէջ, մասնաւորելով մեր խօսքը Թուրքիոյ Հայոց վանքերուն վրայ եւ անոնց մէկ հակիրճ վիճակագրութիւնը ներկայացնելով մեր ընթերցողաց, պիտի պարզենք մեր տեսութիւններն այն միջոցներու մասին որոնք վերջին երեսուն տարիներու մէջ ձեռք առնուած են արդէն Ազգային Վարչութեան կողմէ, եւ անոնց մասին ալ որոնք այսուհետեւ կրնան ի գործ դրուիլ Թուրքիոյ հայ վանքերու վիճակին բարւոքման համար։

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

(1) Եւ ուրիշ վանքեր ալ, աւերակ կամ ամայի, զորս կը յիշատակէ Ալիշան Իր. Տեղագրութեան մէջ. Ծիծեռնավանք, Մեծիւնից Ս. Յակոբ, Երէջ Մանանց վանք, Հարանց անպար, Ս. Կարապետի Կարգի վանքը, Ս. Արարչու Ս. Հովնաթի կուսանաց վանքերը, Վահան, Դարբ, Գեղարշիկ, Ս. Յովնանի վանքերը, և այլն։

ՄԱՐԿԱՅԵՐԿ

Հաւառոյ հեծե՛ր հողմն ահեղագոռ :
 Երբար մուրացիկ մի կոյր, ակրնկոր.
 Երբար ուղեաց մեջ, ձեռք կարկառ ի մոյր,
 Հերք երկար, ցիրցան, կեղծոս մոխրաբոյր.
 Երբար դուռնե՛ դուռն, աղաղակ բարձած,
 Աղաղակ օրհնուր, համակ կոծ ու լաց,
 Ճիչ կական խրուպոս եւ աղիողորմ,
 Բախելոյ իւր ցուպ ի փախիւս եւ յորմ :
 Մանկունք, ի սեւիչ տուրնչեան այդ բուին,
 Պատուհաններէն ի ներսս սոսնուին :
 Հաւառոյ հեծե՛ր հողմն ահեղագոռ :
 Թիթեղեայ կրե՛ր ի ձեռին սափոր,
 Ժակցոսած անսն որ դեռ քափուր եր :
 Կրծու հով զմակաս հիփին հաւքուրեր :
 Երբար կաղն ի կաղ, երբար ողբագին,
 Ժամն եր խիկունսն օրհնու՛մ զանգակին :
 Այդ քրժնեայ մարդուն ոչ ոք ողորմեր :
 Անշուշ այդ օրը յոյժ մախող օր մ'եր,
 Մուրացիին համար մի դրժընդակ օր :
 Հաւառոյ հեծե՛ր հողմն ահեղագոռ :
 Երբ եւս մերձեմար, քաց դրունք փակուեին :
 Այնքան զագիր եր իւր վերադուն հին
 Եւ դրժեհայեաց՝ իւր ակամողիք :
 Ո՛վ մեծասունք, դուք որ հեշտեալ լուղիք
 Ճոխ առաստաբեանց, վայելից ի ծով,
 Այդ հիփին համար ի՞նչ մը գո՛ւր գորո՛վ :
 Ո՛վ, յոյժ աղօղի եւ իւր հանդերձներ,
 Եւ այդ մուք սեւիչ մեր գուք չի գրաւեր :
 Ձառաղիւ, դրժե՛ք, մըծողնե՛ք այդ մարդուն
 Ո՛վ կարե երբեք ըզգայ զըրթոքին :
 Բուրե՛ համակ անձն աղբ, շարաւ, փակուր :
 Հաւառոյ հեծե՛ր հողմն ահեղագոռ :
 Եւ երբ մերձեցաւ գիշերոյ խաւար,
 Ուրիշ առագաստ մըքին հողմափար,
 Տուն դառնայ խորհե՛ր յուսողն վասշըրեր :
 Կոյրերն ի՞նչ ըզգան քե՛ հաւառ գիշեր :
 Դիմեց ի ծովափն ուր մըռնչեն աղիք,
 Եւ անդ, ո՛վ խորհուրդ, ո՛վ զարմանալիք,
 Հերք հողմաշարջար, ահաւոր, ցաւկոս,
 Քաղաքին դարձած քաղաղներ կըրոս,
 Խառնելոյ իւր մայնն ալեաց շառաւիղն,
 Դոյժեր խույ, օրիւնդ եւ դիւանքման :
 Եւ մըրթութեանց մեջ, ուր օրեր գոռոււմ,
 Ահա զայրագին, քրքնե՛ին, սոսկո՛ւմ,
 Կոյր օտրն եւ կոյր մարդն ընդդէմ ֆաղափին
 Մին իւր փրփուր, միւսն՝ անեծք ահագին :

ԶԱՏԻԿ ՀԱՅՈՑ

Քրիստոնէական մեծագոյն տօնն է Զատիկը : Զատիկ հայերէն բառ է եւ է թարգմանութիւն Եբրայական Պասէք կամ Փասքա բառին , որ կը նշանակէ զապօւն կամ քրէն-թիւն , զի Հրեայք այդ տօնը ութ օր անընդհատ կը կատարեն ի յիշատակ իրենց Եգիպտոսէ զատուելուն : Քրիստոնէութիւնը եւս Զատիկը կը տօնէ մեծահանգէս , վասն զի Քրիստոսի աստուածազօր յարութեան շնորհիւ մարդիկ այլ եւս քրէն-թիւն են մահու գերութենէն եւ զապօւն են մեղքէ , որոյ ենթարկուած էին երբեմն :

Առաքեալք սահմանեցին այս տօնը , եւ փոխելով շաբաթը որ մինչեւ այն ատեն հանգստեան օր որոշուած էր , հանգստեան օր անուանեցին միաշաբաթը , այսինքն Նիքիայի , որոյ առաջօրէն Քրիստոս յարեալ : Այս տօն առաքելական դարուն յաջորդող երկու դարերու մէջ ոչ նուազ վէճերու տեղի տուաւ : Պնդողներ կային թէ լուսնի լրումին յաջորդող կիրակի օրը տօնելու է Զատիկը , թէ ոչ : Որովհետեւ վէճը սաստիկ էր եւ չկար հեղինակութիւն մը , որ ճշդէր , ուստի Զատիկը կը տօնուէր շատ անգամ ոչ միեւնոյն ժամանակի մէջ , մինչեւ որ Նիկիոյ ժողովը գումարուելով վճռեց լուսնի լրումին յաջորդող կիրակի օրը կատարել Զատիկը , եւ այսպէս միօրինակութիւն հաստատեցաւ բոլոր քրիստոնեայ աշխարհի մէջ , մինչեւ որ Լատինք Նոր տումարը ընդունելով զատուեցան արեւելեան եկեղեցիէն , եւ սկսան Զատիկը կատարել , շատ անգամ ոչ Յունաց եւ ոչ Հայոց եւ ոչ ուրիշ արեւելեան քրիստոնեայ ազգերու հետ (1) :

Բայց Քրիստոսի յարութիւնն ունէր մեծագոյն նշանակութիւն , վասն զի այն բոլոր հրաշներ զորս Յիսուս գործած էր , չէին այնքան բաւական հաստատել թէ Նա է ճշմարիտ Մեսիայն , զի մարգարէներն ալ այդ բոլոր հրաշները ժամանակ առ ժամա-

նակ գործած էին , եւ Հրեայք որք զայս զիտէին , կը դժուարանային հաւատալ , ուստի Յիսուս պէտք էր որ գործէր հրաշներու մեծագոյնը . Նա պիտի ջախջախէր մահը , եւ այս իւր իսկ ինքնազօր յարութեամբ , եւ իւր աստուածային փառքը պիտի սկսէր այն օրէն : Առաքեալք եւ հայրապետք այսպէս հաւատացին ու քարոզեցին , եւ Հայոց եկեղեցին ար անդրանիկ գոստրն է քրիստոնէութեան , առաքելական դարէն ի վեր կը տօնէ շքեղապէս Զատիկը մինչեւ ցայսօր :

Ի հնումն հայ ժողովուրդն ունէր նուիրական տօներ , եւ այդ տօներով իր սրտին սիրական արեւն ու լոյս կը պաշտէր եւ անդադար յեղ յեղելով շուշանն ու վարդ , ոգեւին կը խայտար : Բազինք կը թնդային ի ձայն քնարի հայ գուսաններու , այլ այս անգամ մինչ հեթանոսութեան յաջորգած էր քրիստոնէութիւնը , պիտի լռէին այդ գուսանք , եւ պիտի չթնդային քրիստոնէական տաճարներու խաչանիչ կամարք , քանի որ այս նոր կրօնն ալ ունէր իր կարմիր-Արեւը , որ ընդ համօրէն աշխարհ լոյս ճառագայթած էր : Քրիստոս էր այդ արեւը , որ շուշանափայլ ու վարդափառ լուսով պիտի կեանք շնորհէր աշխարհի : Ահա տաղ մը , որ հայկական գպրութեան մէկ հրաշակերտն է , որ եւ այսօր կ'եղանակուի ի ժամ պատարագի , ի մեր յուշ բերելով հին հայ գուսաներգութիւնը :

« Այսօր նոր արեւ հարեալ
Ի նորահաւաք արեգակնէ ,
Յարեգակնէ արդարութեամբ :
Այսօր նոր օուսան ծաղկեալ
Ի նորատունկ բուստասանէ ,
Յաստաւածասունկ բուստասանէ :
Այսօր նոր վարդ վառեցաւ ,
Լոյսն ի վերին Սրուսաղէմ ,
Լոյսն հաւաքալոյք յՍրուսաղէմ : »

Ոչ թէ միայն այս օրինակ տաղեր , այլ եւ Շարականն , հայկական երաժշտութեան այս գանձարանն , մեծազորող պիտի հնչէր եւ հաշակէր թէ ծագեցաւ Արեգակն արդարութեան , եւ պիտի աւետէր թէ յարեալ լուսապսակ Փեսայն ի սէր իւրոյ հարսին , այն է Եկեղեցւոյ :

Այլ միայն չեն տաղք , որք հայ սրտե-

(1) Մինչեւ ցարդ կան քրիստոնեայ աղանդաւորներ մանաւանդ ի Ռուսիա , որք շաբաթը հանգստեան օր կը դաւանին Հրէից պէս , թէն Զատիկը կը կատարեն կիրակի օրը :

րու կը ներշնչեն հոգեկան աւելն ու խանդ , այլ կան խաղեր , զատկական խաղեր որք կը կատարուին լուսադրիւրներու մօտ , զարդարուած շատ մը կարմիր հաւկիթներով , զորս կ'ստանան յաղթական պարտւորներ ծերունի դողդոջուն ձեռներէ եւ գովք կը լսեն նահապետական բերսններէ : Հոն աւելք կը սալէն , եւ հայ աղջիկներ , արծաթեայ ֆափափ ի գլուխ , թեթեւօտն կը պարեն ճիւղեր : Պարկեշտ հարսեր կը կայթեն շրջը , եւ պատանխներ , դէմ առ դէմ շարուած , մերթ իրարու մօտենալով եւ մերթ իրարմէ հեռանալով , կը խաղան քաֆը եւ կամ իրենց թեւերն իրարու ուսի վրայ ձգելով կը խաղան ցափափը , քրդական նաւաբն ալ խառնելով . իսկ կիներ կարմիր վալա հագած եւ լաշակ ի վեր ձգած՝ դուրսն ալ շրջը բռնելով բոլորածեւ կը դառնան : Հա՛րկ է յիշել արդեօք վաղք եւ վաճճ . երիտասարդք հեւ ի հեւ շնչառապառ կը վազեն հեռուն բարձր տեղ մը նահապետին գաւազանէն կախուած կարմիր հաւկիթը առնլու համար : Հապա կարմիր ներկուած ուլիկներն ու գառնուկներն , եւ միւս աւանաւաններն , որ այսօր կ'արձակուին եւ կ'օրհնուին նահապետէն եւ լուսադրիւրի ջրէն կը սրսկուին , որպէս զի կենդանիներն եւս մաճակցութիւն ունենան զատկական ուրախութեանց : Ահա այս է զատկական խաղերու փոքրիկ մէկ նկարագիրը , որք տակաւին կը կատարուին ի գաւառս :

Այլ մինչ քարեպաշտ տարեւորներ կը պատրաստուին տօնել Ջատիկը , հայ պղտիկներ արդէն կանխած են մեծերէն , մանչ ու աղջիկ կը փութան ճրագալուցի երեկոյին յեկեղեցի , ի ձեռին աւանդով կարմիր հաւկիթներ , եւ հոն շար ի շար լռիկ կսպսեն , մինչեւ որ արտասանէ ժամարար քահանայն « Առէք , կէրէք » . եւ ահա այս մատաղ բերաններէն միաձայն կը հնչուին . « Քրիստոս յարեալ » , մինչ զի այս աղաղակներէն ժամրդութիւնը պահ մը կը խանգարի , եւ մանկան որ արդէն կեղեւած է հաւկիթը , զայն ի բերան նետելով , վերադառն կը գորգողայ . « Քրիստոս յարեալ » . եւ անմիջապէս սոքա ժամէն դուրս ելնելով կը վազեն ի տուն , որպէս զի աւետոն նոցա եւս , որք չեն կրցած գալ յեկեղեցի հիւանդութեան կամ ուրիշ պատ-

ճառաւ , թէ Քրիստոս յարեալ : Ահա այսքան մեծ է հայ մատաղ զաւակներու զատկական ուրախութիւնն ու բերկրութիւնը :

Այլ այս ի՞նչ սխալի եւ հիանալի տեսարան է ի գերեզմանոցս : Նա աւանիկ Ջատիկի առաւօտուն գերեզմանք լոյսերու մէջ կը լողան , վասն զի ամէն Հայ Ջատիկի գիշերն արշալոյսը տակաւին չծագած՝ կոչնակի ձայնը լսելուն պէս կը փութայ ոչ թէ յեկեղեցի , այլ վառ մեղրամոմ ի ձեռին՝ ի գերեզման : Հոն ամեն Հայ իր սիրականն ինջեցելոյն զլսին ի վերեւ՝ վառուած մեղրամոմը կը տնկէ , այսպէս առ ինջեցեալն մըրմընջելով . « Աւետիս , Քրիստոս յարեալ ի մեռելոց » : Ահա այսպէս վերեզմանք կը լուսավառին :

Հայ քարեպաշտն այսօրինակ վարուելով ցոյց կը տայ իր սոս առաքինութիւնը , թէ ինչպէս իր սիրականները երբ ողջ էին , կը սիրէր , նոցա մեռնելէն յետոյ եւս կը սիրէ , եւ թէ մահը բաւական չէ եղած իր զի այս սէրը :

Այլ Հայոց նորաստեղծ հարսներն ո՛ւր են . նոքա Ջատիկը կատարելու համար իրենց հօր ու մօր ձեռք-պագի գալով , սոցա քով կը մնան յիսուն օրէ աւելի , մինչեւ որ լսեն Նշիւ մարգարէի կառօք եւ երկվարօք երկնքէն որոտալը . Հարսներ մինչ ցնոյն օր այսինքն Նշիւական կիրակիի օրը , յորում կը վերադառնան իրենց կեարջ տունը , սուրբ կը մնան : Եւ այս չէ՞ միթէ ողջապահիկ կանոն , որ հաւատքի բարոյականին շնորհիւ հաստատուն մնալով բարերար է ընտանեկան կենաց եւ առիթ միանգամայն ընկերային սիրոյ առաւել եւս ամրապնդող պահպանութեան :

Այլ թէ է՞ր հաւկիթն այսքան յարգի է եւ կարմիր կը ներկուի Ջատիկի տօնին . — եկեղեցական մեկնութիւնն այս է , տարբեր կռապաշտական աւանդութենէ , թէ Քրիստոս է հաւիկն հեթանոսաց , զորս ի գոյն կարմիր ներկեց իր արեւնովն որ ի խաչի , եւ թէ գործրինակ հաւն իր ածած հաւ կիթներէն կը թխտէ վառեկներ , այսպէս աստուածային շնորհքն օր մը նորատեսիլ ի լոյս պիտի բերէ այն հաւատացեալներն որք Աստուծոյ , իրենց այս մեծ ու բարերար Մեղրին թեւին տակ պատասպարելով կը դաւանին թէ « Վայ մարդոյ միանգամ մեռանել եւ ապա դատաստան » :

Հաստատելու համար թէ հաւն է Գրիստոս , չարժեք միթէ աստանօր յիշատակել տոյն տաղը , որ մեր երանաշնորհ քնարերգակ մեծագոյն գուսանի մը նուրբ մտքէն ծնած ու սուրբ գրչէն է գծուած .

« Հաւիկ մի պայծառ հետի անճման ,
Ի յայն խաչափայտի վերայ անճման .
Անճմանիդ ո՞վ նրման .
— Դու նրման :

Այսպիսի տաղեր քանի քանի՝ անգամ կրկնուին եւ յեղյեղուին , այնքան մտքեր ու քրտեր ի թինդ կը հանեն եւ ի խինդ կը լնուն . զի այս տաղերուն յիշատակութեամբ , ոչ թէ միայն կրօնն է որ մեր սրտերուն կը խօսի , այլ եւ ի տես տոյն գըրական գոհարներուն՝ կը յափշտակուին մեր միտք եւ մեր երախտադէտ աչեր կը սեւեռին զէպ անցեալն , որ այսքան չնաչխարհիկ յիշատակներ աւանդած է մեզ :

ՆԱՀԱՊԵՏ

ԲԱՆԹԱԼԵՈՆ

Փետրուարի վերջին օրը , գարնանային գեղածիծաղ շաբաթ մը , մինչեւ Նիկոմիդիա զբօսական պտոյտի մը հրաւէր կը ստանայի բարեկամէ մը , Բերայի կենցաղէն տաղտկացած երիտասարդ մը՝ որ նոր միջնորդարի մէջ կը յուսար կեանքի փոփոխութիւն գտնել , գէթ Չէ ժամուան համար : Այս կարճ ուղեւորութիւն նորութեան հրապոյրը չունէր ինձ համար , որ երկիցս կատարած էի զայն , 1888 ին , պատրիարքական պատգամաւորութեան հետ , եւ 1891 ին՝ Ատաբազարի գծին բացման առթիւ : Բայց ուզելով հաճոյքն ստեղծել հոն իսկ ուր չիկայ , կը մըտածէի թէ ինչ տարիներէ ի վեր տաղին անգամ ըլլալով պիտի երթայի քիչ չատ հեռու տեղ մը ուր « թղթակցի » կամ reporter ի պարտականութիւնը չժանրանար վրաս : Զը հաւատան թերեւս անոնք որոյ համար — ինչպէս երբեմն ինձ ալ — ի հեռուստ զբօսալի բան մը երեւցած է ուղեւոր-թղթակցի պաշտօնը : — մեր չըջանալին համար խօսելով : Բայց իրականութիւնը շուտով կը վստէ այդ պատրանքը : Շոգեկառքին մէջ , փոխանակ ուղեկիցներուդ պէս՝ անկիւն մը ընկողմանած՝ ընթերցումը զիտելու՝ հետաքրքիր ըլլալ թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ

չուրջ ու նօթեր առնուլ . հաւուն մէջ , երբ ամենքը կամրջակին վրայ ելած ծովուն մաքուր օդը կը շնչեն , գամառային հեղցութիւն մէկ անկիւնը , երբեք սեղանին վրայ ափ յափոյ թղթակցութիւն մը պատրաստել՝ առաջին հաւանագիտէն սուրհանդակին յանձնելու համար . նոր քաղաք մը հասնելուդ՝ գիշերային հեռագրատուն վազել , մինչ ընկերներդ ըստ հաճոյս կը չըջին ու կը զբօսնուն . երկար ու շահեկան պտոյտէ մը վերադարձիդ՝ փոխանակ բազմոցի մը վրայ երկնցած հանգիստ վայելելու՝ թուղթ ու գրիչ փնտռել . . . օ՛հ , հաւատացէք որ անտանելի է : Օրինակ մը , կամ լաւ եւս փոքրիկ խոստովանութիւն մը այս առթիւ , քանի որ այլեւս տարիներ անցած են : Երուսաղեմի մէջ , 1889 ին , ամբան տօթակէզ օդով մը երկար պտոյտ մը կատարած էինք , հոս՝ ցամքած աղբիւր մը , հոն՝ աւերակ ուխտատեղի մը , աւելի հեռուն չեմ յիշեր որ նուիրական սիւնը տեսնելու . հախաճաշ , ընթերիք , բացօթեայ տեղեր կատարած էինք , չմոռնալով Բեթղեհեմի թմբեցուցիչ գինին որ առատ կը մատուակուէր : Պարտասեալ ու քրտնաթոր՝ քաղաք մտանք գիշերուան առաջին ժամուն . ընկերներս , կըրօնաւոր թէ աշխարհական , վանքին ղրոնէն ցրուեցան , ամենքն ալ զէպ իրենց խուցերը , կամ աւելի ճիշդն՝ անկողինները փութալով : Իսկ ես , մարմնով ընկճեալ , ու պատմական վայրերու պէսպիսութենէն յոգնած մտքով՝ ինքզինքս պարտաւոր կը զգայի տըպաւորութիւններս արձանագրել , վասն զի յաջորդ առաւօտուն թղթատարը կը մեկնէր . անհրաժեշտ էր թղթակցութիւն մը հասցընել : Գրասեղանի ու անկողնի մրցումն երբեք այնքան բուռն չէր եղած յիս , որքան այդ գիշերը , վանական այդ անդորրիկ խուցին , այդ քարուկիր կամարի թանձր միջնորդութիւն մէջ : Պարտքս կատարելու կամ հանգիստ վայելելու մաքառումէն՝ առաջինն յաղթող ելաւ . յուսահատաբար կը նայէի թղթի սպիտակ խոշոր թերթերուն զորս պիտի լեցնէի . թուականը դրած էի արդէն , սկսած ըլլալու քաջութեամբ , երբ երկաթեայ դուռս իր ծինիներուն վրայ դարձաւ . սարկաւազ մը ներս կը մտնէր :

— Այս ժամուն խեղ է :

— Դժբաղդաբար ոչ , պատասխանեց տխուր զէմքով մը :

— Բա՞ն մը պատահեցաւ, Պոլսէն հեռագիր մը կայ, կը հարցնէի սրտատրոփ:

— Փառնջը կարդացի՞ք:

— Բայց ինչդեմ, եղբայր սարկաւագ, Փառնջին մէջ ի՞նչ գրուած է, շո՛ւտ ըսէք:

Իբր պատասխան՝ դանդաղ շարժումով մը վերարկոյին տակէն հանեց Ալաճաճեան էֆէնտիի թերթը, նոյն առաւօտուն հասած, որ, Ազգային Լրոց մէկ անկիւնը, երկու տողով կը ծանուցանէր . . . Արեւելի դադարումը 15 օրուան համար:

Ուրիշ ո՛ր եւ է ժամանակ խորին ցաւ մը պիտի պատէր զիս: Բայց այդ վայրկենին, երբ արտեւանունքս կը փակուէին արդէն ու մատնեւս կը ծանրանային գրչիս վրայ, տարտամ բան մը դգացի, որ եթէ հրճուանքի չէր նմաներ, դժգոհութիւն ալ չէր: Հա. զիւ սարկաւագը դուրս ելած, անկողին կը նետուէի:

Առաւօտուն միայն խղճահարութիւն ունեցայ:

* * *

Քանի որ մղուեցայ թղթակցի տաղտուկներուն վրայ խօսելու, տեղն է յիշել ուրիշ դէպք մըն ալ: Նիկոմիդիոյ առաջնորդարանին մէջ, պատրիարքական պատգամաւորութեան ժամանման գիշերը, մեծ ոգեւորութիւն կար. քաղաքին հայ երեւելիք հոն համախմբուած էին՝ Պոլսեցի հիւրերը մեծարելու. փառաւոր սեղան կը տրուէր ու պերճ բաժակաճառեր կ'արտասանուէին: Այս սովորական ձեւակերպութիւններէն դուրս, շահեկան բան մը կը փնտռէի՝ առաջին թղթակցութիւնս համեմելու համար: Դիպումա՞ծը, — ցաւալի դիպումա՞ծ մը, կը խոտովանիմ, — նպատեց ինձ: Կաթողիկոսական հրատապ խընդիրը, — 1888ի «հրատապ» ը — իր արձագանգը կ'ունենար մինչեւ Նիկոմիդիոյ հանդարտիկ ծովասրտի ինքնալուստի ալ: Պոլսոյ ժողովներուն մէջ վիճաբանելէ չյազեցած տրիբուններ՝ միջադէպ մըն ալ սեղանի վրայ յարուցին. միջադէպը վէճի փոխուեցաւ որ կուսակցութիւններ ստեղծեց իսկոյն. եւ ահա՛ եպիսկոպոս, վարդապետ, աշխարհական, առաջնորդարանի մեծ սրահին ու խոցերուն մէջ կ'որոտային իրարու դէմ: Խեղճ Նիկոմիդիացիք՝ շուարած՝ իւ-

րա, անչիւրն երկու վիճաբանողի քով կը հսկէին, իրենց հիւրամեծարի պաշտօնն յանկարծ հաշտարարի դերի փոխուած տեսնելով: Առաջնորդն հայրական յորդորներ կը կարդար ամենուն: Ես՝ անկիւն մը քաշուած՝ դէմքերը կը դիտէի ու վիճաբանութեանց կը հետեւէի ուշադիր, մտքիս մէջ արդէն ծրագրելով շահեկան թղթակցութիւն մը որ անակնկալ մը պիտի ըլլար Պոլսեցոց համար:

Բայց, ո՛վ դժբաղդութեանս, երբ, ծայները մեղմանալ սկսելով, սուրճը բերին խաղաղութեան ի նշան ու կը պատրաստուէի մեկնիլ՝ գրի սկսելու համար, պատկառելի Նիկոմիդիացի մը կանգնեցաւ դէմս ու ճանրաս կտրեց: Աւելոր անձ մըն էր, քաղաքին «չօրպաճի»ներէն: Հաշտութեան գործին մէջ մեծ լատիներն ինք կատարած ըլլալով, չնչսպառ վիճակի մէջ էր. այտերն ուռած, կարմրած էին ու ճակատը քրտնաթոր:

— Զաւակս, ըսաւ հատկտեալ ձայնով մը, քեզմէ լան մը պիտի խնդրեմ:

— Հրամանեցէք, հաճի աղա:

— Բայց առաջուց խօսք տուր որ պիտի չի մերժես:

— Քա՛ւ լիցի:

— Աս էղածները տեսար լսեցի՞ր ա՛. . .

Կարծելով թէ նոր տեղեկութիւններ ալ ինքը պիտի հաղորդէր.

— Ամենքը ո՛չ, պատասխանեցի. ներսի խոցը որո՞նք էին վիճաբանողները:

— Ո՛վ կ'ուզէ ըլլայ. հիմայ խօսք պիտի տաս ինձի որ աս անցած դարձածներուն վրայ բառ մը անգամ չի պիտի գրես քու լրագրիդ:

— Ի՞նչ կ'ըսէք, հաճի աղա, կարելի՞ լան է. այսչափ բազմութեան մէջ եղած լան մը. . .

— Ես ամենուն հետ ալ պիտի տեսնուիմ, Պոլիս պէտք չէ որ իմանան. ո՛չ ձեզի պատիւ կը բերէ, ո՛չ մեզի:

— Բայց, կ'աղաչեմ. . .

— Տե՛ս, յարեց պատուական ծերունին ձեռքն սպիտակ մօրուքին տանելով, տէտէիդ տեղը մարդ եմ. խօսքս մտիկ պիտի ընես: Ասիկայ իմ անձիս խնդիրը չէ, ազգին պատիւն է:

Ու կը նշմարէի որ խոռովեալ աչքերէն

արցունքի քանի մը կաթիլներ կը հոսէին թառամեալ այտերն ի վար : Անկեղծապէս յուզուած , գայթակղած էր բարի մարդը եւ կ'ուզէր իր քաղաքին ու Պոլսոյ պատիւը պահել աշխարհի առջեւ :

Կրնայի՞ ընդդիմանալ , խոստացայ : Բայց միեւնոյն ժամանակ սաստիկ սրտնեղութիւն մը կը զգայի՝ Հաճի աղային ներկայացուած ըլլալու իբր Աբէ-Էլփի թղթակից : Ի դարձին յԱրմաշէ , դարձեալ գտայ զինքը առաջնորդարանին մէջ , այս անգամ գոհ երեւոյթով մը :

— Ապրի՛ս , տղաս , ըսաւ հայրական գորովանքով ճակատս համբուրելով , խօսքս մտիկ ըրիր . բան մը չես գրեր եղբեր , իմացայ :

Չեմ կարծեր որ այս անցողակի յայտնութեամբ խոստումս դրժած համարուիմ : Այսքան ապաշխարանքը երկար իսկ չէ՞ թղթակցի մը համար :

* *

Փետրուարի վերջին «րը , երբ Հայտար-Փաշայի կայարանէն վազոնի մը մէջ կը տեղադրուէինք ընկերոջս հետ , կը մտածէի թէ գրելու կամ չի գրելու տաղտոկներ չպիտի ծագէին այս անգամ : Ո՛չ գիրք , ո՛չ լրագիր , ո՛չ իսկ թղթի կտոր մը կամ մատիտ մը առած էինք հետերնիս : Կ'ուզէինք աննպատակ , անաշխատ , անփոյթ երթեակութեան մը հաճոյքը վայելել . պզտիկ dolce far niente մը : Երկաթուղւոյ այդ չորս ու կէս ժամու գնացքն ինքնին պիտի հայթայթէր արգէն մեր ըղձացած սիրուն անգործութիւնը : Անոնք մանաւանդ որ ամէն առաւօտ կ'ելլեն խանի մը երկար սանդուխներն , — իրական կեանքի Գողգոթան , — քարուկիր գրասենեկի մը մէջ փակուելու համար մինչեւ իրիկուն , պիտի ըմբռնեն այս երազին բոլոր հմայքը :

Այս գրօսական պտոյտը մեր վրայ թողուց սակայն տխուր տպաւորութիւն մը որուն քով հեշտ պիտի թուէր առօրեայ կեանքի միօրինակութիւնն ու ձանձրոյթը : Նշանաւորագոյն վայրը զոր Նիկոմիդիացիք կուգին ցոյց տալ իրենց հիւրերուն , Բանթալէնի ուխտատեղին է , Յունաց Չարխափան Ս . Աստուածածինը : Պանդոկի մը անհրապոյր խուցին մէջ անքուն գիշեր մը անցընելէ ետք , առաւօտուն փութացինք

գէպ ի այդ մենաստանն որ քառորդ ժամու մը հեռաւորութիւն ունի քաղաքին կեդրոնէն : Գիշերն անընդհատ տեղացող անձրեւն անանցանելի դարձուցած էր ճամբայներն , որոց չըջակայքը դաշտերն ու պարտէզները եզակիան հրապոյր մը կ'աղղէին՝ մօտալուտ դարնան առաջին բուրումներովը , մաքտի գաղջ արեւին անդրանիկ ճառագայթից տակ . հոս հոն , բլուրներու լերկ կողին վրայ , դալարեաց , մարգագետնի մասնիկներ , ծառատունկերու նորածիլ տերեւներ , վարդագոյն ու սպիտակ ծաղկանց փթթում մը : Բնութեան զարթնումն էր որ կը նկարուէր մեր բոլորտիքը :

Բանթալէնը չըջապատեալ է ցած պարիսպով մը որուն արտաքին կողմը , մեծ դրան մօտ , պայծառ հորիզոնի մը մէջ , փոքրիկ պուրակ մը , մշտաճոս աղբիւր մը ու վայրի թռչնոց ճռուողիւնք աւելի բերկրապատար կ'ընծայէին բնութեան զարթնումը : Ներսը , պարտէզին մէջ , տերեւազուրկ ծառերու տակ սեւազգեաց կիներու խումբ մը որ արցունքոտ աչքերով մեր երեսը կը նայէր , հետաքրքրութենէ աւելի կարեկցութիւն չարժեց . առաջին մեղմադճութիւնն հոն զգացինք , լսելով որ այդ կիներ եկած էին Բուլփա բաժնել ծաղկատի աղջկան մը մահուան քառամնօրէին առթիւ : Քիչ մը անդին , պարտէզին հեռաւոր մէկ անկիւնը , բանջարանոցի մը ծայրը , փայտաշէն տնակի մը դուռը բանալ տալու հետաքրքրութիւնն ունեցանք : Յոռեզոյն անակնկալի մը չէինք կրնար սպասել : Այդ տնակին մէջ կուտակուած կը տեսնէինք մեռելոց գանկեր , որք գողցես իրենց խոռոչացեալ կապիճները մեր վրայ կը յառէին , դիւային քրքիչի մը ստուերը կրելով իրենց ցցուած այտերուն վրայ . հարկւրներով կային , մեծ ու փոքր , բայց ամենքն ալ նոյն դաղիր մերկութեամբ , դարաւններու մէջ դասաւորուած կամ դագաղի մը աստիճաններուն վրայ ու գետինը դիզուած : Մահուան գաղափարին բիրտ սոսկումը ո՛չ մէկ տեղ , ապահովապէս , այնքան զգալի է քան կմախացեալ գլուխներու այդ պահարանին մէջ : Կիներ , էրիկ մարդր , չէին զանազանուեր . գեղեցիկն ու տգեղը հաւասարապէս ոսկորի կոյտեր էին : Եւ եթէ կարենային զգացում մը արտայայտել այդ ոսկերտիք , ո՛հ , ինչ

չե՛ր երեւան պիտի գալին , գոհացումներ ,
ատելութիւններ , հաճոյքներ ու զգուանք-
ներ : Այն սիրուն աղջիկը որ կեանքի մէջ ,
իր գիմաց բոլոր գեղովն ու հրապոյրովը ,
ոխ կ'ազդէր նախանձոտ ագեղներու , հիմայ
կը թաւալէր անոնց արհամարհոտ կզակնե-
րուն տակ . չքաւորն որ ընչաւէտի մը կեան-
քին կըղծար , իր քերծուած գանկովն
անոր քով կը բազմէր այդ խորշին մէջ . ու
տարփատենչ երիտասարդն ալ որ ամբողջ
տարիներ ըղձանքով ու հալումաչով թա-
փառած էր իր սիրած կնոջ ետեւէն եւ ա-
նոր քղանցքին խակ կարօտն էր քաշած ,
մահուան մէջ իր պաշտելիին հետ ապրելու
երանութիւնը կուենար : Գարշ շունչ մը
կ'արտաբերէր ոսկերոտեաց այդ խուցն ու-
րուն սեմէն ներս չ'կրցինք անցնիլ . գե-
րեզմանի մը բաց փողով՝ գանկերու այդ ցու-
ցահանդէսէն նուազ ահռելի պիտի թուէր
մեզ :

Եկեղեցի մտանք սթափուելու համար :
Մաքուր , սիրուն եկեղեցի մը որուն պա-
տահաններէն առատ լոյս կը թափանցէր
սրբոց պատկերներուն ու սպիտակ մարմար-
ներուն վրայ . այդ լոյսը , այդ սպիտակու-
թիւնը թեթեւ իմն փոփեցին դմեզ :

Բուն Բանթալէնը եկեղեցիին ներքեւն
է , գետնափոր մատուռ մը որուն մէջտեղ
կը գտնուի հրաշագործ սուրբին գերեզմանը :
Ու այդ մթին մատրան մէջ , բոլորածեւ
նեղ սանդուղ մը աւելի վար կը տանի ,
դարձեալ վար , միջտ վար , դէպ ի հողին
տակը , աշաղհան , յատակը ջրով ողողուած :
Ուխտաւորը պէտք է իջնէ ու իջնէ , գե-
րագոյն մխիթարանքն անդունդին մէջ փրն-
տուելու : Հոն , այն քարին վրայ ուր կե-
ցած էինք , վանդակին մօտ որուն կը յե-
նուինք , եղբրական , ահռելի տուամ մը
կատարուած էր ոչ շատ յառաջ : Հայր մը ,
իր զաւկին մահէն անհունապէս զգածուած ,
ամէն օր Բանթալէնի գերեզմանատունը
կուգար աղջկանը հողակոյտին վրայ աղօ-
թելու : Վիշտը , յուսահատութիւնը , փո-
խանակ ամօքուելու՝ կը սաստկանային :
Արցունք եւ աղօթք անբաւական կուգային
այդ խոցոտեալ սիրտը մխիթարելու : Եկե-
ղեցիին մէջ կը մնար ժամերով կամ կ'իջ-
նէր գետնափոր մատուռը , գլխիկոր , հեծե-
ծագին , թափառայած իր աղջկան ստուե-

րին ետեւէն շուր կը կարծէր ընդնշմարել
մարմարեայ սիւներուն ետին : Եւ օր մը ,
վերադարձէն յուսահատած՝ գէթ անոր միա-
նալու հաւատքով , Բանթալէնի գերեզմա-
նին վրայ վերջին աղօթք մը մրմնջելէ յե-
տոյ , գլխիկայր կը թաւալի սանդուղներէն
վար , աշաղհան մէջ խեղդամահ ըլլալու :

Երբ հաշտեալն կը պատմէր մեզ այս
եղբրական դէպքը , անայլայլ շեշտով , սո-
վորական բանի մը պէս , սարսուռ մը
կ'անցնէր մեր ոսկորներէն ու կը կարծէինք
ընդնշմարել անձնասպան հօր ջախջախեալ
ուղեղն ու արիւնը՝ տարածուած ջուրի մա-
կերեսին վրայ ուր կը շողար մատրան կա-
մարէն իջնող տկար ճառագայթ մը արեւու ,
իբրեւ՝ երկնաւոր ցոլացում մը նահատակի
մը գերեզմանին վրայ :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԶԱՐԹՈՒՄ

Այճերն անոնց որք նոր սիրեն
Արձակեն քարմ հուր մ'անձաւոք ,
Ջերդ նարաձոյլ ոսկի անօր
Վառի արփայոյն ճափ համբոյրէն :

Այգ մը հոգւոյն մուք վիհերէն
Ծագի եւ հոն շողայ շիկնոս .
Այճերն անոնց որք նոր սիրեն
Արձակեն քարմ հուր մ'անձաւոք :

Կուսարփուն է որ յամբօրէն
Հոն կը ցնդի , շոգի ազօս .
Մանուկ աստղեր են նարաւոս
Որ ոչնչին պաճան խորէն ,
Այճերն անոնց որք նոր սիրեն :

ՀՈՎԸ

Հովը մամիկն է ծերունի
Որ հեկեաքներ կը մըմբռայ ,
Ծրք , ուղեւոր ու ռահվիրայ ,
Հին ծառերուն մէջէն կ'անցնի :

Ձայնն համբոյրին գգուանքն ունի
Ծրք կը սափի ծաղկանց վըրայ .
Հովը մամիկն է ծերունի
Որ հեկեաքներ կը մըմբռայ :

Ռայց երգն առնէ շեւս վայրենի
Ծրք գիշերին մէջ կը սուրայ .
Եւ գոռայ գերդ հիակարայ
Ծրք խօսի ջուրց ովկէանի .
Հովը մամիկն է ծերունի :

ԱՍՏՂԵՐԸ

Աստղերը լուռ ցաւեր են
Որոնք կ'այրին յաւիտեան
Շիրեր հասին քաղծուքեան
Իրենց բոլորն բիրբրէն :

Վարէն քոչին քէ վերէն
Գլորիւն, ծաղկունք լուսեփնեան,
Աստղերը լուռ ցաւեր են
Որոնք կ'այրին յաւիտեան :

Երկնից խաւար խորերէն
Իրենց պառկեան յովկիւսն
Կը դիտեն միտս, մրքութեան
Մէջ լոյս լալով օրսփոփէն :

Աստղերը լուռ ցաւեր են :

18 Մարտ 92.

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Քանի մը տարիներէ հետէ, մեր նորա-
ծիլ գրականութեան առթիւ, վիպական գա-
նազան դպրոցներու վերաբերեալ բառեր
այնքան շատ կը յեղյեղուին առ մեզ եւ
մեր գրողաց ումանց բնապաշտական հակում-
ներն, իրաւացի եւ անիրաւ այնքան գան-
գատանաց առիթ կուտան յաճախ հրապա-
րակագրութեան մէջ որ, վերջապէս, կար-
ծեաց այս անհամաձայնութիւնն ու շատ
անգամ անարդար քննադատութեանց ծայ-
րայեղութիւնը կը խոնջեցնեն գրասիրին
միաժը եւ մարդ կ'ստիպուի հարցնել իւրովի
թէ ո՛ւր ենք եւ ո՛ւր կերթանք :

Յայտնի է որ, սկիզբէն ի վեր, մեր աշ-
խարհիկ գրականութիւնը գլխաւոր աղբիւր
ունեցած է ֆրանսական մատենագրութիւ-
նը, — կամ լաւ եւս, — վիպագրութիւնը :
Մեր բոլոր թարգմանիչը — ընդ որս նաեւ
ծանօթ գրագէտ թարգմանիչը, — մեծ մա-
սամբ, չ'ըսելու համար « բացարձակապէս »,
վէպեր թարգմանած եւ տակաւ ծաղկեցու-
ցած են աշխարհիկ լեզուն : — Ֆրանսերէնի
վիպական եւ հրապարակագրական սեռերու
մշակութեան շարունակութեամբն անկա-
րելի էր անշուշտ վերջին ժամանակներս չը
յարիլ նաեւ բնապաշտական սեռին, որ օր-
ուան գրականութիւնը դարձած էր այլ եւս.
Նա մանաւանդ երբ՝ Շթէնտալի, Պալզազի
եւ Ֆլօպէրի յաջորդը սքանչելի երկեր գրե-
ցին այդ սեռին մէջ : Ապաքէն, ինչպէ՞ս
կ'ազգէիք որ ֆրանսերէնը մշակող հայ գրա-

գէտ մը հիացում չ'ունենար, օրինակի հա-
մար, Պուրժէի « Mensonges »-ին համար
եւ չը կրեր նորա տալաւորութիւնը : Եթէ ի
հաշիւ առնումք նաեւ քաղաքակրթութեան
ազդեցութիւնը մեր բարուց վրայ եւ մեր
բարուց ազդեցութիւնն ի վերայ գրականու-
թեան, այն ատեն կ'արդարանան մեր երի-
տասարդ գրիչներէ բազմաց ֆրանսական
ձգտումները :

Առանց համամիտ լինելու անոնց որք
կը կարծեն թէ ներքի է մեզ այսուհետեւ
մերկանդամ ներկայանալ գրքերու կամ գըր-
ուածներու մէջ, կրնանք ըսել թէ ֆրան-
սական նոր մէթոտներու կիրառութենէ
զարհուրելու պատճառներ չ'ունինք բնաւ :
Ժամանակաւ մարդը կը պատկերացնէին որ-
պէս պարտ էր նմա լինել, ըստ կար-
ծեաց անձնիւր հեղինակի . այսօր կը նկա-
րագրեն զնա որպէս է, ըստ ինքեան : Բը-
նապաշտական դպրոցի գրող մը, իրերն ու
մարդիկը կը պատկերացնէ իրենց բնական
վիճակին մէջ, իրենց ձեւերով ու շարժում-
ներով, առանց ամենափոքր խորհրդածու-
թիւն մ'աւելցնելու իւր կողմէ : Նա կ'ըն-
տրէ իւր բառերը, կը չափէ իւր նախադա-
սութիւններն ու պարբերութիւնները, նկա-
րագրելի կացութեան կամ տեղւոյն հանգա-
մանաց համեմատ, եւ իւր արուեստին
չնորհիւ զանազան զգայութիւններ կը ներ-
շնչէ մեզ : Եւ այս մէթոտը հզօրապէս
կ'ազդէ մեր մտքին վրայ . լաւ եւս կ'ըզ-
գանք մեր խեղճութիւններն ու մոլութիւն-
ները եւ լաւագոյն գաղափար մը կ'առնունք
ճշմարտութեան վրայ : Այս ճշմարտութիւնը
վնասեցուցիչ կրնայ լինել երբեմն, բայց
որի՞ է յանցանքը :

Որպէս բօմանթիկ գրականութիւնն իւր
ժամանակին, նոյնպէս բնապաշտականն ի
վերջին ժամանակս մեծ ծառայութիւն մա-
տուցած կրնայ համարուիլ մեր աշխարհիկ
լեզուին : Անուրանալի է որ նորասիրաց
աշխոյժ ու ստէպ յանդուգն փորձերու շնոր-
հիւ աշխարհաբարը ներդաշնակ ու սահուն
լեզու մը դարձաւ : Շատ մը բառեր, բառ-
գրքէն դուրս ելնելով, եկան հմայել մեր
ականջներն ու զգայութեանց նոր աղբիւր-
ներ հոսեցնել մեր երակաց մէջ : Վերջին
ատեններս, մեր վիպագրական ճիւղին մէջ
կատարուած փորձերը, թէեւ տկար իսկ

ըլլան, դարձեալ ճոխացուցած չեն միթէ մեր աշխարհիկ գրականութիւնը :

Այս ծառայութեանց հանդէպ, արդար է թեւ թեւ քիչ մը ներողամիտ ոգով շարժիլ նորասիրաց նկատմամբ եւ գնահատել իրենց արժանիքն — երբ արժանիք ունին, — փոխանակ իբրեւ ոչնչութիւններ նկատելու իրենց բոլոր արտադրութիւններն եւ իրր գրակործան եւ անբարոյական հոգակելու գրական ճիւղ մ'որոյ արմատը կը կազմէ խորին իմաստասիրութիւն մը : Անտարակոյս, նորասպաշտք բարոյական զարտուղութիւններ ունին նոյն իսկ իրենց մշակած ճիւղին բերմամբ, զորս հարկ է նուազ զայրոյթով դիտել, զի, վերջապէս, հաստատ բարոյականի տէր անձ մը՝ որ մտաւորական հաճոյքի, զարգացման կամ ուսումնասիրութեան նպատակաւ կ'ընթեռնու, այդ թեւեւ արտուղութեանց մէջէն կարող է գրանել իւր ուղիղ շաւիղը : Ես չպիտի խօսիմ բնաւ անփորձ եւ թերուս աղջկանց կամ պատանեկաց ընթերցանութեան վրայ . ծընողը կամ դաստիարակը պարտականութիւն ունին որոշելու նոցա մտաւորական անընդեան տեսակը, ըստ պահանջմանց ընկերական այն կացութեան առ որ սահմանուած են :

Փափաքելի է որ ծայրայեղ գրական պահպանողականք համաձայնին այս կէտերու վրայ : Գրական նոր ոգւոյն դէմ մարտնչելով ո՛չ ինչ կը շահինք եւ ժամանակին յառաջ բերած փոփոխութեանց վրայ դժուար է յաղթանակ տանիլ :

Սակայն եւ այնպէս, նուազ փափագելի չէ թերեւս որ, նորասպաշտք եւս, իրենց կարգին ա՛յնքան արհամարհանք չը տածեն գրական պահպանողականաց նկատմամբ եւ գէթ երբեմն յարգեն նոցա արդար դիտողութիւնները :

Ֆրանսական ամեն նորութեան հետաքրքրուելու մէջ անշուշտ վտանգներ կան մեզ համար : Ըստ երեւութից, ո՛րքան ալ եւրոպական կեանքով ապրինք, եւրոպական ժողովրդոց ո՛չ իմացական եւ ո՛չ նիւթական աստիճանն ունինք : Նոցա կատարելութեան հասնելու համար կարօտ ենք էական պայմանաց զորս ֆրանսական ամեն նոր մէթոտ ընդունելու սկզբունքը չ'պիտի ընձեռէ մեզ :

Հաւատալով հանգերձ թէ գրականու-

թիւն մը չշինուիր ուրիշ բաներու պէս, — Յլօպէրի խօսքին ակնարկել չէ միտքս —, այլ ինքնիրեն ծնունդ կ'առնու, եթէ ուզէի գէթ մե'րնոր գրականութեան սահմաններուն վրայ դեղերիլ քիչ մը, պիտի չփափագէի բնաւ հետաւոր պտոյտներ ընել եւ պիտի ըսէի . ունիմք տոհմային գրականութիւն մ'որոյ գոյութիւնն արդէն հրաշք մ'է եւ ոյր անսպառ օգնութեամբ կարող ենք գրական աշխարհիկ լեզու մը կազմել որպէս ըրին արդէն ոմանք . պահ մը պիտի հանգչէի, գոհ ու զուարթ, այս դժին վրայ . բայց յետոյ, անմիջապէս յոտին պիտի կանգնէի, բանաւոր տեղծական եւ իմաստասիրական պէտքէ շարժեալ եւ, լեզուն միայն չգոհացնելու դիս, պիտի ըսէի, երթանք որոնել ամենուրեք, ամեն ժամանակաց եւ ամեն ազգաց մէջ, գեղեցկին ու ճշմարտին գաղափարը :

Եւ այսպէս թափառայած, սկսելով «Մահապարհաշէն կամ Վեհաներէն, պիտի հասնէի մինչեւ Յլօպէր, Սուրբ Անդրէի փոքր յոթնէր իւր թեւին տակ, մինչեւ Իւկօ, կամ մինչեւ Մօբասան եւ Պուրժէ, մինչեւ Լէոն Թոլսթոյ, խորհուրդ հարցնելով իւրաքանչիւրին, շոյելով մին կամ՝ ի հարկին՝ նպատակ մը հանելով միւսին : Եւ եթէ ճամբորդութեանս միջոցին պատահէի այնպիսիներու որք միտքարէին հոգիս կամ գոհացնէին միտքս, չպիտի արհամարհէի զանոնք այն պատճառաւ թէ ինձմէ երեսուն, քսան, հինգ կամ կէս դար յառաջ ապրած են, եւ պիտի չիշխէի իբրեւ անպիտան ՚ի բաց հրել իրենց վարդապետութիւնները «Ո՛չինչ նոր ի ներքոյ արեգական» . շատ հին խօսք մը որ նոր է ցարդ : Արեգակը տակաւին արեւելքէն կը ծաղի միշտ եւ մարդ կը մեռնի այսօր նոյն մահուամբ որով կը վախճանէր Գօնֆուէլուսի ժամանակին :

Այս տեսակէտով, ամեն անոնք որք ինձ պէս խորհելու դժբաղդութիւնն ունին, չը պիտի իմանային անշուշտ, անհրաժեշտ կերպիւ նորն ընդունելու եւ հինքն արհամարհելու դրութիւնը : Յոյժ ծանրակշիռ ուղեղ մը հարկ է ըմբռնելու համար ոմանց այն առարկութիւնը թէ իտէսական ծիծաղելի է այսուհետեւ : Ոչ միայն ծիծաղելի չ'է այլ Ֆրանսացիք, — քանի որ նոցա հետ է մեր գործը, — արդէն սկսած են վերադառնալ իտէականի եւ այսօր կը գնահատեն Լամար-

դիրք աւելի լաւ քան քառորդ դար յառաջ : Սխալ է թերեւս կարծել որ խառնակներ պատիր է համակ. կրնայ ըլլալ որ նիւթակահին չափ ճշմարտութիւն պարունակէ, — իմաստասիրական նիւթ մը, որ շատ հեռին կրնար տանիլ զմեզ :

Վերադառնալով մեր նոր գրականութեան սահմաններուն, պիտի ըսէի — Պարոնեանի պէս այս կամ այն մատենագրութեան ազդեցութենէ անկախ հանձարներու թողով իրենց թոյլը, ինքնատիպ եւ հարազատ երկեր արտադրելու համար, — թէ ընտրողական գրականութիւն մը, որոյ շրջանակէն չը պիտի արտաքսուէին ո՛չ դասականք, ո՛չ իտէպալաշտք եւ ո՛չ բնապաշտք յոյժ յարմար պիտի լինէր գոհացնելու մեր մտաւորական պէտքերը, մինչդեռ հոգին անտեսելով միմիայն նիւթին, — կամ ուրիշ բառերով, — իրականին կամ բնականին հետեւելու սկզբունքէն բանաւոր չ'է թերեւս բարոյական ճշմարիտ զարգացում ակնկալել մեզ համար: Կէս դարու մէջ հասնիլ այն աստիճանին ուր Թրանսպիրէ վաստակարար ծառայութիւն չորս դարերու մէջ, Թրանսպիրէ անհայտ յապէս պիտի ընկնէ արեւելքը :

Աղբիւրնապոյտ

Մ. Ե. ՍԱՐԳՍԻԱՆ

ՄԵՐ ՀՈՐԻԶՈՆԻՆ ՎՐԱՅ

— Գ. ՍԱՐԳՍ ԵՍ. ՀԱՅԻԶՆԱՆԻ ուսուցչական եւ գրական գործունէութեան երեսնամեակը — ծանուցած ենք արդէն — պիտի տեսնուի յառաջիկայ Ապրիլ 9 ին. Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնն ալ իր կողմէն որոշած է այս առթիւ հրատարակել բանաստեղծին բոլոր անհայտ եւ սպեւաբերութեամբներուն հաւաքածոյն : Այս լուրը շատ շահեկան կողմեր ունի արդարեւ Թրքահայոց համար. երեսնամեակի մը տնտեսական զարգացումի մին կրնանք համարիլ, եւ այդ զարգացման աւելի հաստատուն ապացոյց՝ հրատարակչական Ընկերութեան մը գոյութիւնը. լուրը մէկէ աւելի օրինակ կը պարունակէ մեզ, Թրքահայոց համար :

— Գ. ՀԻՐԱՆԱՆԻ, Ռուսահայ ծանօթ վիպասան, հեղինակած է «Իշխանուհի» վերնագրով Թատրախաղ մը որ Թիֆլիսի Թատրոնին մէջ ներկայացուած է 'ի ներկայութեան խումբն ըստմութեան : «Թատրոնը ծայրէ 'ի ծայր լինէր» :

— ԻՇԽԱՆԱՆԻ արժանի իշխանական ներկայացում : — Ի ՄՈՍԿՈՒՍ, Փետրվար 10 ին, քաղքին Համալսարանին եւրոպական գրականութեան բաժնէն Ս. Վեսելովսկի, կարդացած է «Բասնէրորդ դարու նախնաց օրը», վերնագրով հրատարակչին դասախոսութիւն մը, յորում 'ի մէջ այլոց հայ գրականութեան վրայ խօսելով ըսած է.

«Վերջին յիսուն տարիներու մէջ հայ գրականութիւնը զարգացաւ. անոր հրատարակչութիւնն ու վիպասաններն աշխատելով իրենց լեզուին փոխադրել եւրոպական ստեղծագործութեան հրաշակներէն, յոյս կուտան որ իրենց գրականութիւնը աւելի եւս լուսաւորեն » :

Մարթներ որ Բասնէրորդ դարու վեջին օրը լուսաւորին զովեւս մը տուի մեր գրականութեան : — ՏԱՐԱՆԱՆԻ մամաներին փետրվար 23 թուոյն մէջ հրատարակուած է Սեփաննոս Պալասանեանի կենդանագիրը, հանգուցելոյն մահուան երեքամեակին առթիւ :

Սեփաննոս Պալասանեան Ռումանիա ծնած, իր ուսումը աւարտած էր 'ի Բարիկ Մուրասեան վարժարանը, եւ յետոյ 'ի Կովկաս հաստատուելով 30 տարի անընդհատ դասախօսած է հայ մանուկներու եւ հրատարակագրութիւնը ըրած :

Հանգուցելոյն կարեւորագոյն երկը Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը 'ի լոյս ընծայեց անոր մահուանէն յետոյ :

Մեր խեղճ վարժպետները իրաւունք պիտի ունենային նախանձելու իրենց կովկասցի արուեստակցին, — նոյն իսկ մեռած :

— ՍԱՐԳՍԻԱՆԻ ուսանողներէն կը ծանուցանէ Տիգրան Էֆէնի Զուհանեանի մօտայն ծամանումն 'ի Թիֆլիս. յարգելի Մաքսրոն իր օրհուրները պիտի ներկայացնէ հոն օտար երաժշտաց աշակցութեամբ :

Զուհանեան Էֆէնիսի վասնի կրնայ ըլլալ որ Ռուսահայր իր 'ի փարիզ կրած ծախողութեան տեղը պիտի լեցնեն, եւ . . . գրասան ալ :

— Գ. ՀԱՅԻՆԱՆԻ տնօրէնութեան ներքեւ գտնուող հայ դերասանական խումբը ներկայացնել փորձեց 'ի Գաբրիելի «Մենասանին աղօթիւն», երգախառն Թատրոնի Ընկերութիւնը, Թարգմանութիւն Մ. Մամուեանի :

Պէտք է հաւատալ որ Թատրախաղին «Մենասան» վերնագիրը բաղդ չ'էր բերած խումբին, որ ներկայացման զիշեր ինքզինք կատարեալ մենասանի մը մէջ գաւ Թատրոնին մէջ :

— Գ. ԲԱՐՍԵՂ ԷՄԻՆՆԱՆԻ տնօրէնութեան ներքեւ Գաբրիելի Պետրոս Գուրեանի անհայտ եւ սպեւաբերութիւնները. Էմիննեան Էֆէնի վաղամեռ բանաստեղծին եւկու անհայտ նամակները արդէն Արեւելքի մէջ հրատարակութեան տուած է. Իրական վայելքը, այդ հաւաքագին նամակները :

— Գ. ՀԱՅԻՆԱՆԻ կիներ կը մեռնի. մեր գաղափարները ճշգրտաւոր արուեստագէտին. եթէ իր կեանքի ընկերը կորսնցուցած է միշտ կը մնայ իրեն անբաժան ընկեր մը, Արուեստը :

— Ի ԳԱՏԵՂԻՆԻ ներկայացուած Զոռնե Ժեռն Թատրախաղին զիշերը պատահած : — Դերասանները անպատասխար 'ի գուր լուսնելու ուզած են. պառկելու եւ անկողնոյ ծախք չը վճարելու համար ստիպուել են 15 դերասան 7 անկողնի վարձել փոխն 'ի փոխ քանակաւ համար, խեղճ երիտասարդները. Առջի իրիկուն. ալ, մեր վաղեմի ճշգրտաւոր կատարողական-դերասան Գ. Զաքարյանեան ցուրտէն ոտքը գետնը զարնելով պանիր հաց ուտելով կը գոչէր. «Ո՞վ կը հրամայ հայ դերասանի կերակուր » :

ՄԱՐԿԱ

ԱՐՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԹԻԱՆ

ՓՈՐԱԳՐԻԶ ՍԵՐՎԻՉԷՆ

ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, Սուլթան Համադ, Աղբիւրն ԲՈՎ